**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2 պայմանագրում 2018 թվականի մայիսի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ:** Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագիրն ավելացնել վճարման ժամանակացույցով:

**Փոփոխության նկարագրություն:** Կողմերը որոշեցին 2018 թվականի ապրիլի 12-ին կնքված N **ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2** ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով (Հավելված 2)՝ համաձայն հավելվածի:

**Փոփոխության հիմնավորում:** Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.1 և 8.5 կետերը՝ պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N1 հավելվածի 56-րդ կետի պահանջները:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
«12» ապրիլի 2018թ. N ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2 գնման պայմանագրի

ք. Երևան «21» մայիսի 2018թ.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Երանոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018 թվականի ապրիլի 12-ին կողմերի միջև կնքված N ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2 ծածկագրով գնման պայմանագրի 8.1. և 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2018 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2 ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով (Հավելված 2)՝ համաձայն հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի | «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ |
| Գլխավոր վարչության | ք. Երևան, Կոմիտաս 59/7, բն. 12 |
| ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 01204231 | Հ/Հ 1570027662590100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ 00173964 |
| Հ/Հ 900013207023 | Վ. Երանոսյան |
| Ա. Մանուկյան | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
«21» մայիսի 2018թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-05/18/2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ արտաբյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 15861300/301 | Սուրճ, լուծվող | ... % | ... % | ... % | ... % | ... % | 447000 | 447000 | 447000 | 447000 | 447000 | 447000 | 447000 | 447000 | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի Գլխավոր վարչության<br>ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ<br>ՀՎՀՀ 01204231<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013207023<br>Ա. Մանուկյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ<br>ք. Երևան, Կոմիտաս 59/7, բն. 12<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570027662590100<br>ՀՎՀՀ 00173964<br>Կ. Երանոսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |